ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Hoag Orthopedic Institute-ի ֆինանսական խորհրդատվության բաժինը տրամադրում է անվճար ֆինանսական ստուգումներ այն մարդկանց համար, ովքեր չունեն առողջական ապահովագրություն և չեն կարող վճարել իրենց հիվանդանոցային հաշիվները, ինչպես նաև այն հիվանդների համար, ովքեր ունեն ապահովագրություն, սակայն չեն կարող վճարել հաշվի այն մասը, որն ապահովագրությամբ չի ծածկվում:

Մեր ֆինանսական խորհրդատուները կսահմանեն ձեր իրավասությունը Medicare-ի, Medi-Cal-ի կամ ձեր բժշկական ծառայությունների հաշիվները վճարելու մասով պետական այլ աջակցության համար: Պետական աջակցության համար ոչ իրավասու հիվանդները, այնուամենայնիվ, կարող են որակավորվել Ֆինանսական աջակցության ծրագրի, զեղչերի կամ այն բարեգործական ծրագրերի համար, որոնք հասանելի են Hoag Orthopedic Institute-ի միջոցով:

Ինչպես դիմելԴուք կարող եք կապվել մեր ֆինանսական խորհրդատուների հետ անմիջապես հիվանդանոցից դուրս գրվելուց կամ ծառայությունները ստանալուց հետո՝ զանգահարելով 949-764-5564 հեռախոսահամարով կամ էլ. նամակ ուղարկելով FC@hoag.org հասցեին:

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ստանալ ֆինանսական օգնության դիմումի ձև, խնդրում ենք կապվել մեզ հետ. **հեռախոսով՝** 949-764-8413

մեր կայքում՝ **hoagorthopedicinstitute.com**

անձամբ այցելելով հետևյալ վայրերից մեկը.

Hoag Hospital- Newport Beach Cashier's Office (Գանձապահարան) One Hoag Drive Newport Beach, CA 92662 Աշխատանքային ժամեր՝ երկուշաբթիից ուրբաթ առավոտյան ժամը 8:30-ից մինչև երեկոյան ժամը 4:30-ը կամ էլփոստով FC@hoag.org հասցեով	**Hoag Hospital- Irvine** Cashier's Office (Գանձապահարան) 16200 Sand Canyon Ave Irvine, CA 92618 Աշխատանքային ժամեր՝ երկուշաբթիից ուրբաթ առավոտյան ժամը 8:30-ից մինչև երեկոյան ժամը 4:30-ը կամ էլփոստով FC@hoag.org հասցեով	**Հիվանդների համար ֆինանսական ծառայություններ** Attn: Charity Care Specialist (Ուղղված՝ Բարեգործական օգնության մասնագետ) 2975 Red Hill Ave., Suite 200 Costa Mesa, CA 92626 Աշխատանքային ժամեր՝ երկուշաբթիից ուրբաթ առավոտյան ժամը 8:30-ից մինչև երեկոյան ժամը 4:30-ը կամ էլփոստով PFS@hoag.org հասցեով

Հիվանդանոցային հաշիվների մասով բողոքարկման ծրագիր

Եթե կարծում եք, որ ձեզ անարդարացիորեն մերժել են ֆինանսական օգնությունը, կարող եք բողոք ներկայացնել Կալիֆոռնիա նահանգի հիվանդանոցային հաշիվների մասով բողոքարկման ծրագրին: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու և բողոք ներկայացնելու համար անցեք **HospitalBillComplaintProgram.hcai.ca.gov**:

Լրացուցիչ օգնություն

Գոյություն ունեն սպառողների շահերի պաշտպանությամբ զբաղվող անվճար կազմակերպություններ, որոնք կօգնեն ձեզ հասկանալ հաշիվների ներկայացման և վճարման գործընթացը՝ ներառյալ Health Consumer Alliance-ը healthconsumer.org կայքում:

Health Consumer Alliance

Առողջապահական ծառայությունների սպառողների դաշինքը (Health Consumer Alliance, HCA) սպառողների աջակցության անկախ ծրագիր է, որն առաջարկում է անվճար օգնություն հեռախոսով կամ անձամբ՝ օգնելու այն մարդկանց, ովքեր փորձում են ստանալ կամ պահպանել առողջապահական ծածկույթը և լուծել իրենց առողջապահական ծրագրերի հետ կապված խնդիրները: HCA-ն կարող է օգնել ձեզ դիմել այնպիսի ապահովագրական ծրագրերի համար, ինչպիսիք են Medi-Cal-ը, Hospital Presumptive Eligibility-ն, մասնավոր ապահովագրությունը կամ Covered California-ն:

Կառավարվող առողջապահական խնամքի վարչություն

Կառավարվող առողջապահական խնամքի վարչությունը (Department of Managed Health Care, DMHC) կրթում է սպառողներին իրենց առողջապահական իրավունքների մասին, բավարարում սպառողների բողոքներն առողջապահական ծրագրերի դեմ, օգնում սպառողներին հասկանալ իրենց ծածկույթի բնույթը և աջակցում սպառողներին համապատասխան առողջապահական ծառայություններից ժամանակին հասանելիություն ստանալու հարցում: DMHC-ի օգնության կենտրոնը բոլոր լեզուներով ուղղակի օգնություն է տրամադրում առողջապահական ծառայությունների սպառողներին HealthHelp.ca.gov վարչության կայքի և (888) 466-2219 անվճար հեռախոսահամարի միջոցով:

Հիվանդանոցային հաշիվների մասով բողոքարկման ծրագիր

Հիվանդանոցային հաշիվների մասով բողոքարկման ծրագիրը պետական ծրագիր է, որը վերանայում է հիվանդանոցի որոշումներն այն մասին, թե արդյոք դուք իրավասու եք ձեր հիվանդանոցային հաշիվները վճարելու նպատակով օգնություն ստանալու համար: Եթե կարծում եք, որ ձեզ անարդարացիորեն մերժել են ֆինանսական օգնությունը, կարող եք բողոք ներկայացնել Հիվանդանոցային հաշիվների մասով բողոքարկման ծրագրին՝ **HospitalBillComplaintProgram.hcai.ca.gov՝** լրացուցիչ տեղեկատվություն ստանալու և բողոք ներկայացնելու համար:

Անակնկալ հաշիվների ներկայացման տեխնիկական սպասարկման ծառայություն

Սպառողների համար Անակնկալ հաշիվների ներկայացման նկատմամբ պաշտպանության միջոցների մասին ավելին իմանալու համար կապվեք 1-800-985-3059 հեռախոսահամարով կամ այցելեք www.cms.gov/nosurprises/consumers:

Գաղտնիություն
Մենք հասկանում ենք, որ ֆինանսական օգնության կարիքը կարող է լինել գաղտնի և խորապես անձնական խնդիր: Մենք պարտավորվում ենք պահպանել հարցումների, տեղեկատվության և ֆինանսավորման գաղտնիությունը:

Մենք պարտավորվում ենք Hoag Orthopedic Institute-ի ֆինանսական օգնության ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը հեշտ հասկանալի ձևով հասանելի դարձնել այն համայնքներում, որտեղ մենք գործում ենք:

Ի լրումն անգլերենի՝ այս ամփոփագիրը, Hoag Orthopedic Institute-ի ֆինանսական օգնության ծրագրի քաղաքականությունը և Hoag Orthopedic Institute-ի ֆինանսական օգնության համար դիմումաձևը հասանելի են նաև այլ լեզուներով՝ ներառյալ, այդ թվում, արաբերեն, չինարեն, պարսկերեն, կորեերեն, իսպաներեն և վիետնամերեն: Եթե ձեզ օգնություն է հարկավոր ձեր լեզվով, խնդրում ենք զանգահարել **949-764-8400** հեռախոսահամարով կամ այցելել **hoagorthopedicinstitute.com** կայքը:

Հաշմանդամություն ունեցող հիվանդները կարող են հասանելիություն ստանալ այս ծանուցմանը մատչելի այլընտրանքային ձևաչափով՝ ներառյալ, առանց սահմանափակման, խոշոր տպագիր, բրայլյան, ձայնային և այլ մատչելի էլեկտրոնային ձևաչափերով՝ կապվելով ընդունելության գրասենյակի հետ **949-764-8275 կամ 949-517-3161** հեռախոսահամարներով: